

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՍՍ.ՐԳԻՍ ԽՌՃԻԵԱՆԻ ԿՏԱԿԸ.

Նոր Նախիջևանցի Սարգիս Կարապետեան Խոճիեան վախճանուել է 1907 թ. փետրուար ամսին: Մահից առաջ Մոսկուայի հօտար Իվան Ուսպէնսկու մօտ 1906 թ. սեպտեմբեր 9-ին կտակ է անում և որը մահից յետոյ Տաղանքոզի Շրջանային Դատարանը հաստատում է 1907 թ. յունիսի 14-ին, իսկ վերջնականապէս, մասնակի դանդատից յետոյ, 1908 թ. յունվարի 29-ին: Կտակակատար նշանակում են՝ Խ. Չալխուշեան, Յ. Շապօշնիկեան, Գ. Բաղչիսարայեանց, Կ. Գոզոզեան և Ա. Չամինեան:

Այդ կտակով յայտնում է իւր հետևեալ կամքը.

ա) (այս և բ-րդ յօդուածով գումարներ է կտակում իւր ազգականներին) գ) Տալ Երուսաղէմի ս. Յակովբեանց Հայոց վանքին երեք հարիւր ուրլլի. դ) Տալ Տվերի նահանգի Կիմրախ գիւղի Ալէքսանդրեան դպրոցին 200 ուրլլի յօգուտ աղքատ աշակերտների. ե) Տալ նոր Նախիջևանի հայ աղքատախնամ եկեղեցական Հոգաբարձութեան 500 ուպայմանով, որ այդ գրամագլուխը դառնայ տոկոսաբեր թղթեր, որ մնան անձեռնմխելի, իսկ տոկոսները իւրաքանչիւր տարի տրուի Նախիջևանի հայոց նիկուլեան եկեղեցու միաբանութեան, որ Չատկից յետոյ առաջի կիւրակէին իւրաքանչիւր տարի մատուցանեն ս. պատարագ, որից յետոյ էլ հոգեհանգիստ իմ գերեզմանի վրայ:

Ապա պարտաւորեցնում է իւր կտակակատարներին, որ իւր բոլոր անշարժ կարողութիւնը, որտեղ էլ որ լինեն, կտակը հաստատուելուց երկու տարի յետոյ պէտք է բոլորն էլ վաճառուեն աճուրդով կամ առանց աճուրդի: Թէ շարժական կարողութիւնից մնացած գումարը, կտակի երկրորդ յօդուածում յիշատակուած կէտերը կատարելուց յետոյ, և

Թէ անշարժ կարողութիւնից գոյացած դումարները ես կտակոււմ եմ Դոնի վրայ գտնուած Նախիջևանի հայ աղքատախնամ Եկեղեցական Հոգաբարձութեան այն անփոփոխ պայմանով, որ իմ կտակակատարները կտակածս գումարով, համաձայն իրենց անձնական հայեցողութեան, բանան Վիդաւստեսական դպրոց արհեստների բաժնով հետեւեալ երեք հայ գիւղերից մէկոււմ. Չալթր, Թօփուր կամ Մեծ Սալայ որոնք գտնուում են Ռոստովի շրջանում, և կամ թէ ս. Խաչ վանքի մօտ։ Այդ դպրոցում պէտք է սովորեն վերոյիշեալ տեղերի հայ-լուսաւորչական դաւանութեան պատկանող ամենաաղքատ զաւակները։ կտակի այս մասը պէտք է իրագործուի ոչ ուշ քան կտակը դատարանով հաստատուելուց երեք տարի յետոյ։ Եթէ Նախիջևանի հայ քաղաքացիներից կամ յիշեալ գիւղերի հայ բնակիչներից մէկն ու մէկը ցանկութիւն կըյայտնի միանալ իմ ընծայաբերութեան և մասնակից լինել իմ ենթադրած դպրոցի ապագայ ընդարձակման կամ ծաղկեցման և այդ նպատակին կըյատկացնի որոշ յայտնի գումար կամ ապահովութիւն իւրաքանչիւր տարի, այն ժամանակ իմ կտակակատարներից կախուած կըլինի ընդունել այդպիսի առաջարկութիւնը։ Դպրոցը պէտք է կոչուի իմ անունով, իբրև հիմնադրի և ընծայաբերողի, իսկ եթէ կըմիանան այլ ընծայաբերողներ, այդ դէպքում իմ կողմից ես ընդդէմ չեմ, որ միանան նաև այլ ընծայաբերողների անունները, եթէ կտակակատարներն անհրաժեշտ կըգտնեն։ Եթէ ենթադրածս դպրոցի համար չի գտնուիլ յարմարաւոր շինութիւն, այդ դէպքում իմ կտակակատարները կարող են նոր շինութիւն կառուցանելու համար գործադրել իմ թողած դրամագլխի քսան տոկոսից ոչ աւելի։ Մնացած դրամագլուխը պէտք է դարձնել 0/0⁰/0-աբեր թղթեր և տալ Պետական բանկը ի պահպանութիւն, պայմանով, որ տոկոսները գործադրուի ենթադրածս դպրոցի կարիքների համար։ Իմ կտակակատարներս, բաց անելով յիշեալ դրպրոցը, եօթն տարի էլ կառավարելով, երբ կը պարզուի, որ դպրոցի հիմնադրութեան ամբողջ գործը դրուած է ամուր

և լաւ հողի վրայ, այն ժամանակ եւ խնդրում եմ իմ կտակակատարներին, որ թէ քացուած դպրոցը և թէ նորակարիքների համար կտակուած դրամագլուխը յանձնուի Նախիջևանի հայ աղքատախնամ Եկեղեցական Հոգաբարձութեան շարունակելու սկսուած գործը կտակի մէջ ամբողջապէս արտայայտուած իմ կամքի համաձայն: Եթէ մինչև եօթն տարին կտակակատարներից մէկը կը հրաժարուի, այն ժամանակ խնդրում եմ հայ աղքատախնամ Եկեղեցական Հոգաբարձութեան իւր միջից, ընդհանուր քուէարկութեամբ, ընտրի մէկը փոխարինելու հրաժարուած կտակակատարին, մինչև որ դպրոցն ամբողջապէս կանցնի Հոգաբարձութեան տեսչութեան:

Հինգերորդ. Ի դէպս, եթէ այս կտակի շորորդ կէտում յիշատակուած դպրոցը, իմ կտակակատարներից անկախ պատճառներով, չի քացուի, կամ թէ լինելով քացուած, ապագայում կը փակուի կամ որ եւ է պատճառով կընդհատի իւր գոյութիւնը, այն ժամանակ իմ կողմից նորա հիմնարկութեան կամ պահպանութեան համար ընծայարեւածս դրամագլուխը իւր տոկոսութենքով անցնում է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի տնօրէնութեան՝ յօդուտ կրթական գործի եւ աշխատանքի տներ քաց անելով հայ լուսաւորչական երիտասարդութեան համար. (На предметъ прощвѣщенія и устройства домовъ трудолюбія для армяно-григ. юношества.):

Հանգուցեալի թողած դրամական կարողութիւնն, շարժական և անշարժ կայքերը ի միասին, կտակի վերջնական հաստատութեան յաջորդ տարին՝ այն է առ 1 յունուարի 1909 թիւ, կտակակատարներն հաշուելով՝ հասնում էր 69095 ո. 95 կոպ., իսկ առ 1 յունուարի 1910 թ. դարձաւ 81548 ո. 47 կոպ.:

Կտակակատարներն ամեն կերպ աշխատել են իրագործել հանգուցեալի կամքը հիմնելու Գիւղատնտեսական Դպրոցը, բայց որովհետև եղած գումարի 0/0⁰/0-ներով հնարաւոր չէր մի բարեկարգ Գիւղատնտեսական դպրոց քաց անել՝ դիմել են յիշեալ գիւղերի հասարակութեանց

և ս. Թաշ վանքի վանական կառավարութեան՝ թէ արդեօք սրբան հող և սրբան դրամական նպաստ կարող են յաւկացնել բացուելիք Երկրագործական դպրոցին:

Երբ 1910 թ. մայիսի 10-ին Եկեղեցական Հոգարար-ձուլթեան խորհրդարանի մէջ հաւաքուել էին կտակակաւտարները խորհրդակցելու՝ պ. Պետրոս Խախաւանը իւր և իւր կնոջ կողմից պատրաստակամութիւն է յայտնել նուիրաբերել բացուելիք դպրոցին հարխը հազար ուուրլի: Ի նկատի առնելով պ. Խախաւանի այս խոստումը՝ ժողովն որոշում է բացուելիք Երկրագործական դպրոցն էլ կոչել «Խախաւան-Խոճիեան» շինութեան և այլ պէտքերի համար 35 հազար ուուրլի ծախսել, իսկ դպրոցի տարեկան ծախս սահմանել մօտ 11 հազար ուուրլի, իսկ դրպրոցի բացումը կատարել 1911 թ. ապրիլ ամսին, եթէ ծրագիրը մինչև այդ ժամանակ պատշաճաւոր իշխանութեան կողմից հաստատութիւն գտած կը լինի*):

Երկու տարուց աւելի անցնում է՝ բայց Խախաւանը չէ կատարում իւր խոստումը, Հոգարար-ձուլթիւնն էլ հնարաւորութիւն չունենալով բաց անել Երկրագործական դպրոց Խոճիեանի թողած գումարի տոկոսիքներով՝ դպրոցի բացման խնդիրը մնում է առկախ:

Վեհափառ Հայրապետն տեղեկութիւններ ստանալով, որ հանգուցեալ Խոճիեանի կտակակաւտարները հնարաւորութիւն չունեցան բաց անել Գիւղատնտեսական դպրոցը, իսկ կտակի շարքորդ յօդուածի գօրութեամբ կտակակաւտարները պարտաւոր են դատարանի հաստատելուց երեք տարուց ոչ ուշ իրագործել կտակակաւտարի կամքը՝ որից յետոյ ամբողջ դրամագլուխը անցնում է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի իրաւասութեան, ուստի 13 յունիսի 1913 թ. կոնդակով պատուիրում է կտակակաւտարներին հանգուցեալ Խոճիեանի թողած ամբողջ գումարը իւր 0/0%-ներով ուղարկել ս. Սիւնօղին ս. էջմիածնի՝ թողնելով Իւր տրամադրութեան ներ-

*) Տես Նոր-Նախիջևանի հայոց աղքատախնամ Եկեղեցական Հոգարար-ձուլթիւնը 1912 թ. մէջ, էջ 40—41:

քոյ համաձայն կտակի և գործադրելու հանգուցեալի կամ-
քով որոշուած նպատակին: Մեծարգոյ կտակակատարները
կատարելով Վեհափառ Կաթուղիկոսի պատուէրը՝ յայտա-
բարութեամբ յայտնում են ի միջի այլոց հետևեալը. «Մեր
անցեալ տարուան տուած հաշուից երևում է, որ հանգու-
ցեալ Սոճիեանի զրամագլուխը առ 1-ն յունուարի 1914 թ.
կներկայացնէր ա) տոկոսաբեր թղթեր 104582 ո. 92 կոպ.
բ) ընթացական հաշիւ և առձեռն 469 ո. 42 կ. գ) վկայդ՝
19000 ուրբի, և դ) առնելիքներ՝ 540 ո. ընդամենայն՝
124592 ո. 34 կոպ. »:

«Ներկայ 1914 թուականի ընթացքում կտակակատար-
ները ի նկատի առնելով կտակի որոշ տրամագրութիւնը,
եղած զրամներով և ամբողջ տարուայ եկամուտներով՝
դարձեալ տոկոսաբեր թղթեր գնեցին, որով այժմ տոկո-
սաբեր թղթերի քանակն աւելացաւ, իսկ ընթացական հա-
շիւը դարձաւ 504 ո. 93 կ.: Արդ, Չերդ Վեհափառութեան
Դիւանի զրութեան համաձայն՝ մենք կտակակատարներս
բոլոր տոկոսաբեր թղթերը, որոնք կը պահուէին Ռոստովի
Կայսերական Բանկը մեր անունով, ներկայ տարուայ Հոկ-
տեմբերի 28-ին ձգեցինք ամենայն Հայոց Կաթուղիկոսու-
թեան անունով և ստացագրերն ահաւասիկ ուղարկում ենք
Չերդ Վեհափառութեան... »:

Վեհափառ Կաթուղիկոսը բոլոր բանկային ստացա-
գրերն Իւր 18 դեկտ. 1914 թ. կոնդակով յանձնում է Սի-
նօղին ի պահ:

Այդ ստացագրերն են՝

Ա. Անդորրագիր № 36838 պահ դրուած 8 թերթ 4⁰/₀
բենտաների, գնուած 4628 ո. 73 կոպ. գումարով, իսկ
անուանական արժէքով 5300 ո.

Բ. Անդորրագիր № 36839 պահ դրուած 71 թերթ ար-
տաքին փոխառութեան 1906 թ. արժէթուղթ, որոնց անուա-
նական գինն է 60187 ո. 75 կոպ.

Գ. Անդորրագիր № 36840 պահ դրուած 8 թերթ 5⁰/₀-
աբեր 1908 թ. ներքին փոխառութեան արժէթուղթ, որոնց
անուանական գինն է 10600 ո., իսկ բորսայի արժողու-

թեամբ 10277 ո. 17 կոպ.:

Դ. Անդորրագիր № 36841 պահ դրուած 3 թերթ 5⁰/₀-
արեր 1905 թ. ներքին փոխառութեան արժէթուղթ 1245
ոուր. իսկ անուանական արժէթուղթ 1200 ո.

Ե. Անդորրագիր № 36842 պահ դրուած 6 թերթ 5⁰/₀-
արեր արժէթուղթ Պետական Հողային Դրամատան 3037 ո.
50 կոպ., իսկ անուանական արժէքով 3300 ոուր.:

Զ. Անդորրագիր № 36843 պահ դրուած 8 թերթ
4¹/₂ ⁰/₀-արեր Պետական Հողային Դրամատան, 6806 ո.
25 կոպ., իսկ անուանական արժէքով 7500 ո.

Է. Անդորրագիր № 36844 պահ դրուած 14 թերթ
5⁰/₀-արեր տոմս երկրորդ վիճակախաղի, որոնց անուանա-
կան արժէքն է 1400 ո. իսկ ըստ բորսայի արժէքի 5586 ո.

Ը. Անդորրագիր № 36845 պահ դրուած 10 բաժնէ-
տոմս (ակցիա) 2 թերթով Հողային Դրամատան Մոսկուայի
անուանակ. արժէքով 2500 ո., իսկ բորսայի արժէքով
7670 ո.

Այսպիսով վերոյիշեալ Ա.—Ը անդորրագրերով Րոս-
տովի պետական բանկը պահ է գրուած ⁰/₀/₀-արեր թղթեր,
որոնց անուանական արժէքն է 91,987 ո. 50 կ., իսկ բոր-
սայի արժէքով 101,315 ո. 40 կոպ.:

Նոյն գեկտեմբերի 18-ի կոնդակով վեհափառ Հայրա-
պետն պատուիրում է Սինսոզին՝ պահել Խոճիեանի դրամա-
գլխի հաշիւները՝ իւր ժամանակին գանձել տոկոսները,
Իւր կողմից որոշումն անելով, համաձայն կտակի 5-րդ
կէտի, ամբողջ դրամագլուխն միացնել Իպրոցական Ֆոն-
դին, իսկ տոկոսիքները գործադրել հայ ազգի մանկանց
ազգային կրթութեան համար, իբրև յաւերժացումն հան-
գուցեալ Սարգիս Խոճիեանի բարի անուան:*)

Բարգէն վարդապետ:

*) Տես Գործ Սինսոզի № 157, Կառավ. Մասի 1914 թ.